

ՊԱՇՏՕՆ ԱԿԱՆՔ

ՀՀ

Ա.

ՔԸԴՈՒԱԾՔԻ Խ ԿՈՆԴԱԿՈՅ ՎԵՀ. ՀՈՅՐԱՊԵՏՔ

Հայրապետական տնօրէնութիւնք.

Կոնդակ յանուն Հոգեոր կառավարութեան Աղեքսանդրապօլու, որով պատուիրեցաւ յարուցանել զողջոյն արդիւնս մոժավաճառութեան վիճակին՝ եկեղ. ծխական Սահականուշեան օրիորդաց դպրոցի Ա. Նշան եկեղեցւոյ տեղւոյն: Թ. 964. հոկտ. 16.

— Յանուն Մանջուրիա կայարանի, որով կարգեցաւ տ. Բնձակ վարդապետն ժամանակաւոր քարոզիչ հայ ժողովրդեան տեղւոյն և պատուիրեցաւ հոգալ զճանապարհածախս և զապրուստ վարդապետին: Թ. 966.

— Յանուն վիճ. կոնս. հայոց Շամախու, որով պատուիրեցաւ աղատ համարել զտ. Բնձակ վարդապետն ի պաշտամանց անդամոյ Ատենին և վանահօր ս. Ստեփանոսի վանուց Սաղիանու և յանձնել զհաշիւս վանուցն տ. Մարտիրոս քահանայի, տաղով փոխարինաբար 200 ըուբլի ճանապարհածախս վարդապետին ի գնալ ի Մանջուրիա: Թ. 967.

— Յանուն Տ. Յուսիկ եպիսկոպոսի, որով կարգեցաւ Փոխանորդ թեմակալին Երևանայ ի տեղի տ. Կարապետ վարդապետի և պատուիրեցաւ ստանալ ի նախորդէն զամենայն գործս և զհաշիւս: Թ. 968.

— Յանուն տ. Կարապետ վարդապետի, որով ըստ խնդրանաց իւրոց աղատ կացուցաւ ի պաշտամանէ փոխ թեմակալին հայոց Երևանայ և կարգեցաւ ուսուցիչ Աստ-

ուածաբանական դիտութեան ի հոգեոր ձեմարանի Մայր
Աթոռոյ: Թ. 975.

— Յանուն Սինօդի ս. Եջմիածնի, ընդ որում յղե-
ցաւ հաստատեալ նախահաշիւն Մայր Աթոռոյ վասն 1906
ամիւ, պատուիրելով նմին ի կիր արկանել զայն: Թ. 978.

— Երջաբերական կոնդակ յանուն թեմ. առաջնորդաց,
որով պատուիրեցաւ զգասս կրօնի հայոց ի պետական
դպրանոցս ի 1906 ամէ յանձնել այնց հոգեորականաց,
որք ունին զվլայական ի թեմ. հոգեոր դպրանոցաց և
թիւ դասուց պարտի լինել առաւելն ի շաբաթու 20: Թ. 1015

— Յանուն տ. Միսիթար վարդապետի, որով կարգե-
ցաւ տեսուչ տպարանի Մայր Աթոռոյ:

— Յանուն պ. Յունանայ Յունանեանց ընակելոյն ի
Բոստով, որով հաստատեցաւ կանոնադրութիւն կրթասի-
րաց ընկերութեան Սալմաստի: Թ. 1075.

— Յանուն տ. Գարեգին արքալիսկոպոսի նախա-
գահի հոգաբարձութեան Մարիամեան Յովանեան դպրոցի
հայոց Տփխեաց, որով հաստատեցան ընտրեալ անդամք
հոգաբարձութեան եռամենայ ժամանակաւ: Թ. 1077.

— Յանուն նորին, որով պատուիրեցաւ կարգադրել
զարդիւնս Մողնոյ ս. Գէորգ եկեղեցւոյ քաղաքին բաշ-
խել մի միայն միաբան քահանայից՝ առանց Գրիգոր ա.
քահանայի Տ. Բարսեղեան, որ չէ միաբան եկեղեցւոյն: Թ. 1078.

— Յանուն նորին, որով պատուիրեցաւ յաւելուլ
զոռնիկ ծառայողաց Կոնսիստորիայի վիճակին, տալ միա-
նուագ իւրաքանչիւրում նպաստ րուրիս յիսունական (50)
և սահմանել միջոց զբազման յաւուրն վեց ժամ: Թ. 1079.

— Յանուն տ. Նահապետ Եպիսկոպոսի, որով կար-
գեցաւ լիազօր ի կողմանէ Նորին Սրբութեան վասն ստաց-
ման գործակցութեամբ տ. Եփրեմ վարդապետի կալուածոց

և դրամագլխոց վանուցն ս. Էջմիածնի, որ ի Տփխիստա-
թ. 1081.

— Շըշաբերտկան կոնդակ թեմակալ առաջնորդաց,
որով պատուիրեցաւ յայսմհետէ զամենատեսակ աթոռային
և զվիճակային արդիւնս մատուցանել Սինօդի սրբոյ Էջմի-
ածնի ըստ առաջնոյն թ. 1096—1100.

— Յանուն Դեռնդ Եպիսկոպոսի՝ լուսարարապետի
Մայր տաճարի ս. Էջմիածնի, որով պատուիրեցաւ նմա-
տալ Խորէն աբեղտյի Լազարեան զմասնաւոր կոչումն վար-
դապետութեան և զվկայականն առաջի առնել ի հաստա-
տութիւն Սինօդի ս. Էջմիածնի: թ. 1104.

— Յանուն Հոգեոր կառավարութեան հայոց Աղէք-
սանդրապօլի, որով պատուիրեցաւ յատկացուցանել զերկու-
երրորդ մասն արդեանց Եօթն վիրաց պատկերին ի պահ-
պանութիւն եկեղ. ծխական դպրոցին յանուն ս. Լու-
սաւորչի: թ. 1107.

— Յանուն ամենապատիւ Պատրիարքի հայոց թուրա-
քիոյ վասն լուծման պսակաց Սարգսի Տէրտէրեան ընդ-
կնոջն Եղնիկի, որով տուան իրաւունք առն մտանել ի նոր
ամուսնութիւն. Մուշեղայ Իսկէնտէրեան ընդ կնոջն իս-
կուհւոյ, արտօնելով երկունց ևս մտանել ի նոր ամուսնու-
թիւն. Հայրապետի Թօնիրշինողեանց Վանեցւոյ ընդ կնոջն՝
տարով իրաւունս ամուսնութեան միայն կնոջն. Մանուելի
Շնորհքեան ընդ կնոջն Մաննիկի, տալով իրաւունս ամուս-
նութեան միայն կնոջն. Ասաւորոյ Գույշումճեան ընդ կնոջն
Անթառամայ, արտօնելով իրաւունս ամուսնութեան միայն
կնոջն: թ.թ. 1122—1127.

— Յանուն փոխանորդին Աղէքսանդրապօլու տ. Կիւ-
րեղ վարդապետի, որով աղատ համարեցաւ ի պաշտամա-
նէն: թ. 1133.

— Յանուն տ. Արսէն վարդապետի Ղլտճեան, որով
կարգեցաւ Փոխանորդ վիճակին հայոց Աղէքսանդրապօ-
լու: թ. 17.

— Յանուն տ. Եփսեմ վարդապետի Սուքիասեանց,
որով կարգեցաւ կառավարիչ Էջմիածնապատկան կալուա-
ծոց Տիլսեաց: Թ. 31.

— Յանուն տ. Բենիկ վարդապետի, որով կարգեցաւ
զեկավար դպրոցաց Քիշինևի ըստ առաջարկութեան Տ.
Ներսէս արքեպիսկոպոսի: Թ. 52. յունվ. 22.

Բ.

Հայրապետական օրհնութիւնք եւ գոհունակութիւնք.

Կոնդակ յանուն տ. Ընձակ վարդապետի, որով շնոր-
հեցաւ իրաւունք կրելոյ զվարդապետական լանջախաչ:
Թ. 968.

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն պ.
Գրիգորի Ամիրեան Երևանցւոյ վասն կառուցման ծախիւք
իւրովք նոր եկեղեցւոյ ի նոր գերեզմանատան քաղաքին
և կարգեցաւ ցմահ երեսփոխ և տեսուչ նոյն եկեղեցւոյ:
Թ. 1021.

— Լանջախաչի յանուն Ռափայէլ քահանայի Տ. Գէ-
որգեան Ներքին Ախտա գեղջ: Թ. 1022.

— Լանջախաչի, յանուն Ղուկաս վարդապետի Էվ-
ջիլաբու: Թ. 1023.

— Լանջախաչի յանուն Արտակ վարդապետի: Թ. 1025.

— Նոյն յանուն Լևոն վարդապետի: Թ. 1026.

— Լանջախաչի յանուն Յակովը քահանայի Տ. Ախ-
մէսնեան Նորքայ: Թ. 1024.

— Կամիլաւկայի յանուն Վահան քահանայի Տ. Յով-
հաննիսեան Ն. Բայազիդի: Թ. 1027.

— Կամիլաւկայի յանուն Ներսէս քահանայի Բալա-
գեօղեան Ն. Բայազիդի: Թ. 1028.

— Կամիլաւկայի յանուն Յովհաննէս քահանայի Վիրատպեան Աւդիբէկ գեղջ։ թ. 1029.

— Օրհնութեան յանուն բժշկապետ պ. Բագրատայ Նաւասարդեան՝ առթիւ քանուհինդամելի հիմնեալ առաջին մասնաւոր հիւանդանոցի նորին։ թ. 1072.

— Օրհնութեան յանուն եղբարց Գրիգորի և Կարապետի Բայբուրդեանց Ախալցխացւոց, վասն նուիրելոյ յօժարութեամբ սրտի իւրեանց զմի հազար բուբլիս և յիշատակ հանգուցեալ հօրն իւրեանց Մանուկայ։ թ. 1089.

— Օրհնութեան յանուն Ստեփաննոսի Մամիկոնեան վասն օդտակար ծառայութեան նորա առ Վեհ. Հայրապետան և առ Մայր Աթոռն ս. Էջմիածնի.

— Յանուն Գէորգ ծ. վարդապետի Իբրանստեան՝ առաջ. տեղապահին Բաբերդի, որով չնորհեցան նմա իրաւունք կրելոյ զվարդապետական լանջախաչն։ թ. 1128.

— Օրհնութեան յանուն բարեպաշտոն անդամոց յանձնախմբի հայ գաղութի Պրաքթընի, վասն ստացման վաթսուն դոլարի յօդուտ հայ արկածելոց Կովկասու։ թ. 12. Յունվ. 7.

— Յանուն ժողովրդեան Վունսօքթ քաղաքին Ամերիկայի, վասն ստացման 75 դոլարի և 35 սէնթի ի նպաստ կարօտելոց Կարնոյ։ թ. 13.

— Յանուն որբախնամ յանձնախմբի Տովըրի, վասն ստացման հինգ անդիլիական ոսկեոյ ի նպաստ հայ որբոց։ թ. 14.

— Յանուն հայ գաղութի Պոսթոնի և շրջակայից նորին վասն ստացման 137 դոլարի և 65 սէնթի ի նպաստ հայ արկածելոց Կովկասու։ թ. 65.

— Օրհնութեան յանուն Խաչատրոյ Թայմիզէեան Ախալցխացւոյ վասն նուիրաբերելոյ նորա մի հարիւր ռուբլի Վեհ. Հայրապետի և յիշատակ հանգուցեալ հօր իւրոյ մահտեսի Յովակիմայ։ թ. 39. յունվ. 18.